تاریخ و فرهنگ

ارمنیان کمره

پژوهش

ادیک باغداساریان (ا. گرمانیک)

تهران ۱۳۸۰

ISBN 964-06-0743-6

شابک ۶-۰۷۴۳-۰۶-۹۶۴

Իրանի Քյամարա Գավառի Հայկական Գաղթօջախի Պատմություն

Աշխատասիրեց՝
Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

ԹԵՀՐԱՆ 2002

ISBN 964-06-0743-6

شابک ۶-۰۷۴۳-۰۶-۹۶۴

Իրանի Քյամարա Գավառի Հայկական Գաղթօջախի Պատմություն

Աշխատասիրեց՝
Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

ԹԵՀՐԱՆ 2002

HISTORY AND CULTURE OF THE ARMENIANS OF CAMARA IN IRAN

(In Armenian)

BY

EDIC BAGHDASARIAN
(ED. GERMANIC)
germanic@armenia.com

Printed in Tehran-Iran 2002

تاریخ و فرهنگ ارمنیان کمره

پژوهش و نگارش : ادیک باغداساریان (ا. گرمانیک)

ناشر : مولف چاپ : احسان

چاپ نخست تهران ۱۳۸۰

شمارگان ۱۰۰۰

۱۰۰۰ تومان

1. Ներածություն

Գաղութահայության պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է: Անհնարին է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրել առանց ուսումնասիրելու տնտեսական, քաղաքական եւ մշակութային այն արժեքները, որ ստեղծվել են հայկական գաղութներում: Այդ առումով ուրույն նշանակություն է ստանում Իրանի հայկական գաղութի պատմության ուսումնասիրությունը: Իրանահայ իրականության մեջ յուրահատուկ կարեւորություն եւ նշանակություն են ունեցել բազմաթիվ գաղթօջախներ՝ այդ թվում եւ Քյամարա գավառի հայկական գաղթօջախը:

Հարկ է ծանոթացնել, որ արդեն վերջին երկու տասնամյակների ընթացքում տողերիս հեղինակը ձեռնամուխ է եղել ուսումնասիրելու եւ հավաքելու զանազան աղբյուրներ եւ գրականության, եւ ի մի բերելու կատարված բոլոր աշխատանքները իրանահայ պատմության տարբեր բնագավառների կապակցությամբ:

Մինչ այս վերոհիշյալ ուսումնասիրությունների հիման վրա շարադրել ենք «Թեհրանահայ գաղութի պատմություն» գիտական աշխատությունը որի ամփոփումը հրատարակվել է Թեհրանի «Արաքս» ամսագրի փետրվար-մարտ 1993-1994 հունվարի համարներում «Ակնարկ իրանահայության պատմության» (Ապագա» ամսագիր, համար 1, 1995, պարսկերենով նույն ամսագրի 1998-1999թթ. համարներ) եւ զանազան այլ հոդվածներ որոնք նվիրվել են հայկական մշակույթին, որոնցում անդրադարձել ենք նաեւ իրանահայությանը: Մեր կողմից փորձ է արվում կատարելու Քյամարայի հայության պատմության ամբողջական ուսումնասիրությունը:

Այսպիսով, իրանահայության պատմության լիակատար ուսումնասիրության եւ ամբողջական պատկերացում ստանալու համար, հարկավոր է ունենալ հստակ պատկերացում թե՛ քաղաքաբնակ և թե գավառաբնակ հայ բնակչության բազմակողմանի պատմության մասին:

Մինչ օրս կատարվել է զգալի աշխատանք իրանահայության պատմության ուսումնասիրության կապակցությամբ, քանի որ իրանահայ գաղթավայրը ավելի քան երկու եւ կես հազարամեա պատմություն ունի եւ գործում դեր է խաղացել Իրանի տնտեսական, քաղաքական եւ մշակութային կյանքում:

Մկսած 12-րդ դարից մեզ մնացած տվյալներից հիմնական նյութերը կարելի է քաղել գլխավորապես հայկական ձեռագիր հիշատակարաններից, հիշատակա-գրություններից եւ նամակներից:

Իրանահայ գաղթօջախների մասին թողել են հիշատակներ հայ պատմիչներ եւ ժամանակագիրներ՝ Մաթեւոս Ուռհայեցին, Արիստակես Լաստիվերտցին, Կիրակոս Գանձակեցին, Թովմա Մեծոփեցին եւ ուրիշներ: Սակայն նշված հեղինակների տեղեկությունները ավելի վերաբերում են հայ բնակչության քան հայ գաղթօջախներին եւ նրանց ներքին կյանքին: Եզակի արժեքավոր աշխատություն է Առաքել Դավրիժեցու «Պատմությունը»:

Իրանահայ գաղթավայրի մասին արժեքավոր տեղեկություններ ենք գտնում Եվրոպացի ճանապարհորդների կողմից գրված ուղեգրությունների մեջ:

Մեկ այլ խոշոր աշխատության հեղինակ է Խաչատուր Ջուղայեցին, որի «Պատմություն Պարսից» գիրքը արժեքավոր նյութեր է պարունակում հայ գաղթավայրերի մասին: